ՄԱՐԻԱՄ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ
Կ.գ.թ., դոցենտ, ՃՇՀԱՀ
Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների
համագումարի համակարգող
refugeesazssr@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

1987-1992 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԿԱՏԱՐՎԱԾԸ 130 ՏԱՐԻՆԵՐ ՁԳՎՈՂ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Ավելի քան 100 տարի առաջ ցեղասպանության հենքի վրա ստեղծեցին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, ինչը հետո վերանվանեցին Ադրբեջանական ԽՍՀ, ու դրա նախանշված ուղենիշը իր ստեղծման օրից հայության դեմ ցեղասպանության շարունակականությունը Կասպիցի արևմուտքում ապահովելու քաղաքականությունն է: Լրացան այդ ցեղասպան պետությանը կամայականորեն հատկացված տարածքներում բնակչության կոտորածների հարյուրերորդ և Սումգայիթի, Գանձակի, Բաքվի ցեղասպանությունների 30-րդ տարելիցները: XX դարի ընթացքում տեղ գտած ցեղասպանություններն էլ՝ այդ պետությանը կամայականորեն հատկացված տարածքներում բնակվող հայկական էթնիկ խմբի նկատմամբ իրականացրին ճգնաժամային իրավիճակներում: Խոսքը 1905-1906 թթ., 1918-1920 թթ., 1987-1992 թթ. ոճրագործությունների մասին է, որոնք հայ ազգին իր բնօրրանում ցեղասպանելու քաղաքականության իրականացում էին:

Խորհրդային տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում ցեղասպանական քաղաքականությունը տարվում էր թեև քողարկված, բայց հետևողական[1]: Գործնականում ամեն տարի Ադրբեջանից հեռանում էր ավելի քան 10 հազար հայ[2], որոնք հիմնականում պահպանում էին սեփականությունը, մշակութային ու

[1] Խոջաբեկյան 2005, 21-41, https://www.lragir.am/2019/08/30/471137
[2] http://www.nkr.am/ru/karabakh-in-soviet-period :

ավանդապաշտական կապերը:

Խորհրդային տարիների հակահայ քաղաքականության ողջ ընթացքը լարել ու սրել էր Ադրբեջանում հայության ինքնապաշտպանական բնազդը, որը սպասում էր ազդակի: Եվ Արցախյան շարժումը հայության ինքնապաշտպանական բնազդի արտահայտությունն էր՝ օր առաջ համախմբելու, դիմակայելու և կասեցնելու համընդհանուր ցեղասպանության ալիքը: Չլիներ Արցախյան շարժումը՝ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայությունը կունենար 1915-ին համարժեք կորուստներ:

Այս աշխատանքում տրվում է հիմնավորում, որ 1987-1992 թվականներին Ադրբեջանական ԽՍՀ-ում հայության հանդեպ կատարվածը 130 տարիներ ձգվող ցեղասպանության շարունակությունն է:

ԽՍՀՄ-ի փլուզման հավանականությունը սանձարձակեց տարածքը էթնիկ հայերից մաքրելու ցանկությունը, և Ադրբեջանական ԽՍՀ-ի իշխանությունների հակահայ քաղաքականությունը 1987-ից ստացավ բացահայտ ու ագրեսիվ բնույթ: Ցեղասպան բռնարարքները 1987թ.-ին՝ Չարդախլուում, 1988-ին՝ Սումգայիթում, Նախիջևանում, 1988-1992-ին՝ Գանձակում ու Գարդմանքում, 1988-1990-ին՝ Բաքվում, Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված հայաբնակ բոլոր վայրերում հայաթափեցին հայկական այդ օջախները: Ադրբեջանական ԽՍՀ-ից շուրջ 800 000 հայ քաղաքացիներ ցեղասպանության վտանգի ներքո բռնի տեղահանվեցին, ցրվեցին աշխարհով մեկ, դարձան փախստական[1]: Այդ օրերին հայերի հետ միասին այդ տարածքներից ցեղասպանության վտանգի ներքո հեռացան շուրջ 300 000 ռուսներ, 70 000 պարսիկներ, 50 000 հրեաներ, նաև ասորիներ, հույներ և այլ ազգերի ներկայացուցիչներ :

Առաջին հայ փախստականները Ադրբեջանական ԽՍՀ-ից հայտնվեցին 1987-ին Չարդախլու գյուղում տեղ գտած բռնարարքներից հետո[2], իսկ առաջին «ադրբեջանցի փախստականները» հայտնվեցին 1988-ի ուշ աշնանը[3]:

Հայությունը 1992-ին կասեցրեց ցեղասպան մեքենայի առաջխաղացումը դեպի Լեռնային Արցախ: Բռնկված ինքնապաշտպանական պատերազմին մասնակցեց Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստական դարձած հայությունը. զոհվեց շուրջ 190 բաքվեցի, որոնցից յոթը՝ Շուշիի մատույցներում, իսկ Սումգայիթից զոհվեց 35 հոգի, որոնցից մեկը՝ կրկին Շուշիի մատույցներում: Ու եթե նրանց չէր հաջողվել ցեղասպանությունը կանխել Բաքվում ու Սումգայիթում, նրանք դա կասեցրին Շուշիում՝ «իրենց արյունով գծելով Լեռնային Արցախի ազատության սահմանները»[4]:

Ինքնապաշտպանական այդ պատերազմը ռազմական ուղիով ցեղասպանությունից պաշտպանության միակ ելքն էր տարածաշրջանի ողջ հայության համար, իսկ Լեռնային Արցախի ինքնորոշման կամարտահայտությունը ցեղասպանությունից փրկության իրավաքաղաքական քայլ էր:

Ադրբեջանում 1988-1990-ին հայերի ջարդը տարվում էր կենտրոնացված

[1] Ավագյան 2018, 265-284, https://www.lragir.am/2020/07/04/561467/ :
[2] Բաղդասարյան 2004:
[3] https://www.youtube.com/watch?v=yBe92Wa5npw&index=4&list=UU6eY6UIBBJqiS2Q0ZRig40A
[4] http://www.kniga.am/?page=museum&place_id=384&search=

կառավարմամբ ու «ներդաշնակ» ժամանակացույցով, այդ մասին է վկայում Վլ. Խոջաբեկյանը. «Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը Սումգայիթից հետո բռնկվեց իրար հաջորդող բազմաթիվ փուլերով: Մարդասպանության բռնկման ամեն մի նոր փուլ սկսվում էր զանգվածային ջարդերով ու մեծ բռնագաղթով: Եվ եթե բռնկման ամեն մի նոր փուլի համար բնորոշը «կարմիր» ջարդն էր, ապա հարաբերական դադարի փուլերում բռնագաղթը ջարդով էր ուղեկցվում մերթընդմերթ: Հարաբերական դադարի ընթացքում փախստականների շարքերը նոսրանում էին:

1988թ. նոյեմբերի 21-22-ին Ադրբեջանում սկսվեց հայ բնակչության ցեղասպանության բռնկման երկրորդ փուլը: Ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Ադրբեջանի գրեթե ամբողջ հայ բնակչությանը:

1989թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկիզբ առավ երրորդ, մեծ բռնագաղթը:

1990թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատը, Ադրբեջանի կառավարող իշխանությունների հետ բռունցք կազմած, ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը դարձավ Ադրբեջանից հայերի արտաքսման չորրորդ և ավարտին մոտեցնելու ամենավճռական փուլը: Սումգայիթը երկնեց Բաքու»[1]:

Ու գործի դրվեց խորհրդային տարիներին քողարկված վիճակում պահված «ազգային բռնության մշակույթը», որի ձևերն ու «արտահայտչամիջոցները» որքանով բազմազան էին, նույնքան էլ աննկարագրելի դաժան[2], դրանք արդեն կիրառվել էին 1909-ին Կիլիկիայում հայերի ջարդերի ժամանակ, 1894-1896-ին, 1915-ին՝ Օսմանյան Թուրքիայում:

1988թ. մայիսին Ղազախում, որտեղ մի քանի հայ ընտանիքներ դեռ մնացել էին, երկու դեռահաս հայուհիների և նրանց հղի քրոջը մերկացրել էին, փողոցով տանելով սպանելու՝ ստիպում էին նրանց պարել, միայն ինչ-որ տարեց ադրբեջանցիներ նրանց փրկեցին[3]:

1987-1992 թթ. Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայության դեմ կատարվածը գնահատվել է ցեղասպանություն[4] :

1990թ. փետրվարի 13-ին Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում՝ դատապարտել հայկական ջարդերը Բաքվում և Ադրբեջանական ԽՍՀ-ի այլ շրջաններում, գնահատել դրանք որպես հայ ժողովրդի ցեղասպանության *շարունակություն* և պահանջել Խորհրդային միության ԳԽ-ից ճանաչել և դատապարտել 1990թ. հունվարին հայերի ցեղասպանությունը Բաքվում և Ադրբեջանական ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում[5]: Այս որոշումը այժմ էլ մնում է ուժի մեջ, թեև ՀՀ-ն որևէ ձևով այս որոշումը չի վերահաստատել: 2008թ. ՀՀ Ազգային ժողովը մշակեց

---

[1] Խոջաբեկյան 2005,

[2] https://www.youtube.com/watch?time_continue=483&v=M711Us0sqOI&feature=emb_logo:

[3] Abrahamian 2006 ,

[4] **Մարտյան 1995,** Оганезов и др. 2014, Улубабян и др. 1989, Բաղդասարյան 2004, Кривопусков 2007, https://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/, http://www.aztagdaily.com/archives/384408 , https://www.youtube.com/watch?v=kxC_7TLkrgA , https://vstrokax.net/istoriya/tsel-operatsii-koltso-ochistit-artsah-ot-armyan/?fbclid=IwAR1dh_XyMkvTMLmhGa5mxdINjXURxQSp6Zxx1L-esa46B4cpI80jAU-zTfI, https://www.youtube.com/watch?v=6fV2urslvPs, https://www.youtube.com/watch?time_continue=483&v=M711Us0sqOI&feature=emb_logo :

[5] https://www.youtube.com/watch?v=4go7FG9P9oQ&t=100s :

նախագիծ, որը այդպես էլ չհաստատվեց[1]: Արցախի հանրապետության Ազգային ժողովը ընդունել է որոշումներ, որոնցում կիրառվում է ցեղասպանություն եզրույթը[2]:

Ադրբեջանում 1987-1992 թվականներին պետական մակարդակով կազմակերպված ու իրականացված ցեղասպանության արդյունքում սպանված հայերի թիվը մնում է չուսումնասիրված[3]: Հայկական երրորդ հանրապետությունը անտարբերություն է ցուցաբերել հայության այդ հատվածի ճակատագրի նկատմամբ և չի նախաձեռնել համալիր հետազոտություն: Սակայն այս ֆոնին հայկական իշխանության կողմից կամ էլ առանձին անձանց կողմից հնչել են թվեր, որոնք չունեն հիմնավորումներ:

Վերոհիշյալ իրադարձությունների մասին պահպանված փաստաթղթերը, լուսանկարները և տեսանյութերը քիչ են: Ոճրագործությունների հետքերը վերացվել են, նյութերն ու փաստաթղթերը ոչնչացվել են, իսկ եթե կան ու պահպանվել են, ապա հավանաբար Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենիայի ու Հայաստանի արխիվներում, իսկ միգուցե և Ադրբեջանի: Խորհրդային իշխանությունները խորհրդային Ադրբեջանի իրավապահ մարմինների հետ համաձայնեցված չհետաքննեցին ու չբացահայտեցին հայերի դեմ իրականացված հակամարդ հանցագործությունները, չդատապարտեցին ոչ կազմակերպիչներին, ոչ էլ իրականացողներին:

Անկասկած է, որ Սումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի վերահսկողության տակ կամայականորեն հայտնված մյուս հայաբնակ տարածքներում այսօր սպանված հայերի թիվը դժվար է պարզել, բայց այդ թվերի սանդղակը հնարավոր է որոշել՝ ելնելով ջարդերը իրականացնելու համար ընդգրկված հրոսակախմբերի ու մարդասպանների թվերից, ջարդերի տևողությունից ու մասշտաբներից: Մեր աշխատանքում փորձագիտական եզրակացությունը այն է, որ Սումգայիթում 1988 թվականի փետրվարի 26-ից 29-ը՝ 4 օրում, սպանվածների թիվը ավելի քան երեք հազար է[4]: Ելնելով «գործողությունների» մասշտաբներից, վկայություններից, Բաքվում և շրջակա բնակավայրերում հայ ազգաբնակչության խտությունից ու բաշխվածությունից՝ մեր փորձագիտական եզրակացությունը նաև այն է, որ Բաքվում միայն 1990-ի հունվարի 11-19-ը՝ 9 օրում, սպանվածների, անհայտ կորածների թիվը մեկ տասնյակ հազարից շատ է, միգուցե և մի քանի տասնյակ հազար է[5]:

---

[1] ՀՀ ԱԺ հայտարարությունը 1988-1992 թ.-ի ընթացքում Ադրբեջանական ԽՍՀ-ի բոլոր և ԼՂԻՄ-ի (հետագայում՝ ԼՂՀ) բազմաթիվ բնակավայրերում ադրբեջանական իշխանությունների կողմից տեղի հայ բնակչության նկատմամբ իրագործված ոճրագործությունները որպես ցեղասպանություն ճանաչման մասին: Նախագիծ, Պ-412-24.12.2008-ԱՀ-012/0:

[2] Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 17.09.1989 թվականի N 1597-XI համատեղ որոշումը՝ «Ադրբեջանական ԽՍՀ-ում, ԼՂԻՄ-ում, Հայկական ԽՍՀ սահմանային շրջաններում հայ ազգաբնակչության և խորհրդային բանակում հայազգի զինծառայողների անվտանգության ապահովման խնդիրների մասին»: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 01.12.1989 թվի N 1651-XI համատեղ որոշումը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշման մասին», https://www.aysor.am/am/news/2017/02/28/%D5%8D%D5%B8%D6%82%D5%B4%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%A9-%D4%BC%D5%82%D5%80-%D4%B1%D4%BA/1220095 :

[3] https://www.youtube.com/watch?v=1N5NV_pbhQ0 :

[4] https://www.lragir.am/2020/03/07/524751/ :

[5] https://www.lragir.am/2020/03/07/524751/, https://www.youtube.com/watch?v=0HLsdNMR4kY,

1987-1992 թթ. Ադրբեջանում հայության դեմ տեղ գտած ցեղասպանության փաստը քողարկելու համար կեղծել են իրողությունը՝ իբրև կոնֆլիկտը սկիզբ է առել 1992 թվին, ներադրբեջանական կոնֆլիկտը ներկայացրել են իբրև Հայաստանի և Ադրբեջանի միջև կոնֆլիկտ, իսկ հայության ինքնապաշտպանական գործողությունները, որոնցով կասեցվեց ցեղասպան մեքենայի հետագա ընթացքը դեպի Արցախ, կեղծվեցին ու կոչվեցին «Ղարաբաղյան կոնֆլիկտ»: Նույնանման կեղծիք գործեց, երբ 1905թ. փետրվարից մինչև 1906թ. հուլիս ընկած իրադարձությունների բովանդակությունը խաթարեցին ու կոչեցին «հայ-թաթարական պատերազմ»: Ալ. Նովիկովը, որը 1902-1904թ.թ. Բաքվի քաղաքագլուխն էր, հակադարձում էր[1], որ դա հայ-թաթարական պատերազմ չէր, այլ նպատակային կազմակերպված անզեն հայերի ջարդ էր զինված թաթարների կողմից: Նովիկովը փորձում է հասկանալ պատճառը ու պարզում է, որ այդ օրերին հայերին ջարդում էին իրենց ազգային պատկանելության համար: Նա այդ ջարդերի կազմակերպիչ նշում է տեղական ցարական իշխանություններին, պանիսլամիզմ քարոզող կենտրոններին:

Մադրիդյան փաթեթի հիմքում ընկած Միջազգային ճգնաժամային խմբի ռեկոմենդացիաները արգելում են հայերի վերաբնակեցումը «օկուպացված տարածքներում»[2]: Հարց է ծագում, ո՞ր հայերի վերաբնակեցումը, կամ տարածքները օկուպացված են ո՞ր հայերի կողմից: Ստեղծված իրողությունը հուշում է, որ Միջազգային ճգնաժամային խումբը չի սայթաքել ռասիստական ռեկոմենդացիա տալիս, այլ բացահայտ ու անկաշկանդ, քաղաքական կոռուպցիայի դաշտից խոսում է փախստական դարձած Ադրբեջանական ԽՍՀ հայ քաղաքացիների իրավունքների դեմ՝ արգելելով հայ փախստականներին վերաբնակվել ցեղասպան մեքենայից ազատագրված հայրենիքի անվտանգ հատվածում: Ու սա մի սցենար է, որը 1926 թվականին կիրառվել էր Նախիջևանում, որտեղ 1917 թվին ապրում էր շուրջ 53 900 հայ: Բայց արդեն 1926 թվի մարդահամարի տվյալներով այդ թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 մարդ: 1918-1920 թթ. ջարդից փրկված և իրենց տուն ու տեղը լքած նախիջևանցի հայերին խորհրդային կարգեր հաստատվելուց հետո էլ ադրբեջանական իշխանություններն ամեն կերպ արգելեցին վերադառնալ իրենց բնօրրանը, թեև նրանց տները դատարկ էին, դռները՝ փակ, հողերն անմշակ[3]: Նախիջևանը հիմնահատակ հայաթափվեց 1988 թվին:

Թուրքիզմի տարածման ճանապարհին կանգնած էր հայությունը, ու սկիզբը Նախիջևանի հայաթափումն էր: Այսօր հայաթափված Նախիջևանը որքանով թուրքիզմի հզորացման գործոն է, նույնքան խոցելի է դարձնում հայության կենսունակությունն ու տարածաշրջանի անվտանգությունը[4]: Հայաբնակ Նախիջևանը անհրաժեշտ հանգամանք է, որ պետք է ապահովի նաև տարածաշրջանի

https://www.youtube.com/watch?v=3tRyt5AXK90,
http://www.aztagdaily.com/archives/384408:

[1] Новиков 2015:

[2] https://www.crisisgroup.org/ru/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-azerbaijan/nagorno-karabakh-viewing-conflict-ground:

[3] Խոջաբեկյան 2005:

[4] https://www.youtube.com/watch?v=tlgu2yF8R34 :

բնիկ ժողովուրդների հավասարակշռված համակեցությունը ու դառնա անվտանգության և խաղաղության երաշխիք: Սա համահայկական քննարկման խնդիր է, լուծումներ պահանջող խնդիր: «Արցախը նույնիսկ իրավունք ունի Նախիջևանի հարցը բարձրացնելու, որովհետև Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ն ստեղծող սուբյեկտներ են, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ն ստեղծելիս իրենց հայտարարության մեջ գրված էր, որ դա հայերի ու մահմեդականների միությունն է»[1]:

Մադրիդյան սցենարը փորձարկվել է ու շատ հաջողված էր դեռևս 1939 թ. հունիսի 23-ին, երբ Ալեքսանդրետի սանջակը պաշտոնապես լուծարվեց և բռնակցվեց Թուրքիային՝ ստանալով Հաթայի վիլայեթ անվանումը: Այդ բռնակցման հետևանքով հուլիսի 16-23-ը ընկած ժամանակահատվածում տեղաբնակ շուրջ 40000 հայեր և 20000 արաբներ լքեցին իրենց բնակավայրը և հաստատվեցին Սիրիայի այլ շրջաններում ու Լիբանանում[2]:

Քննարկում: Այսպիսով՝ 1987-1992 թթ. Ադրբեջանում հայության դեմ տեղ գտած ցեղասպանության փաստը քողարկելու համար կեղծեցին իրողությունը՝ իբրև կոնֆլիկտը սկիզբ է առել 1992 թվին, ներադրբեջանական կոնֆլիկտը ներկայացրին իբրև Հայաստանի և Ադրբեջանի միջև կոնֆլիկտ՝ անվանելով այն «Ղարաբաղյան կոնֆլիկտ», Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների գոյության և նրանց իրավունքների վերականգնման հարցը նպատակային շրջանցեցին ու դուրս թողեցին միջազգային քննարկման դաշտից՝ նրանց հանդեպ արդեն 30 տարիներ շարունակաբար տանելով անհամաչափ քաղաքականություն: Ցեղասպանից ազատագրված տարածքներին տվել են «օկուպացված» կարգավիճակը և մերժել են հայ փախստականների՝ այդ տարածքներում ապրելու իրավունքը, շրջանառության մեջ են դրել հորինված սկզբունքներ, մոտեցումներ, պատմություններ, ինչպես Խոջալուի դեպքերը[3] :

Ու հենց կեղծիքը կիրառում են ցեղասպանության ընթացքը շարունակական պահելու համար. վերջին 30 տարիներին իրականացրել են հակահայ, կեղծ ու հորինված պատմությունների այնպիսի քարոզ, որի արդյունքում այսօր էլ ադրբեջանական հանրության հոգեվիճակը նույնն է՝ ինչ 1987-1992թվականներին էր, ինչ թուրքական հանրության հոգեվիճակը 1915թ.-ին էր: Դրա վկայությունը 2016 թվի ապրիլն է, երբ պատերազմը դրանց համար հնարավորություն էր մորթելու և ըմբոշխելու «ազգային բռնության իրենց մշակույթը», ու Սլոյանի գլուխը բնակավայրերում պտտելիս՝ այնտեղ էլ «խաղաղ» բնակչությունն էր հրճվանք ապրում իր «բռնության մշակույթից»:

1987-1992 թվականներին Ադրբեջանում հայության դեմ տեղ գտած ցեղասպանության փաստը բացառապես ներադրբեջանական կոնֆլիկտ է: Սակայն 1994 թվից մինչ օրս տարվում է այնպիսի բանակցային գործընթաց, որ հանկարծ ու այդ ներադրբեջանական կոնֆլիկտը չլուծվի, որ տարածաշրջանը անընդհատ թեժ լինի ու կառավարելի: Հայկական երկու պետությունների իշխանությունները

---

[1] https://www.lragir.am/2018/09/17/379344/ :
[2] Սուքիասյան 2017, https://varuzhan.me/2015/02/05/hatay/,
[3] https://www.lragir.am/2016/05/13/132672/#sthash.FPcsqxym.dpuf, https://news.am/arm/news/438348.html :

արտաքին թելադրանքի տակ խոսել են հենց պարտադրված կեղծիքի շուրջ: Այսօր պահանջված է մնում Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների իրավունքների վերականգման ընթացքը՝ իրական կոնֆլիկտը բացահայտելու համար[1], տարածքների «օկուպացված» կարգավիճակը «հիմնավորում է» հայ զինվորների սպանությունը ու ցեղասպանության շարունակական պահելու միտումը: Հայերի ցեղասպանությունը որպես սպառնալիք հենց այսօր կիրառում են տարածաշրջանի բնիկ ժողովուրդների դեմ՝ նրանց տարրալուծելու, հնարավորությունները մսխելու և կառավարելի պահելու համար[2]:

Եզրակացություն: Տարածաշրջանում անվտանգության և խաղաղության հաստատման համար Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների իրավունքների վերականգնման խնդիրը առանցքային գործոն է, և օր առաջ այն պետք է դրվի քաղաքական սեղանի վրա: Անհրաժեշտ է, որ հայկական 2 պետությունները 1987-1992 թթ. Ադրբեջանի իշխանությունների կողմից Ադրբեջանական ԽՍՀ-ի ազգությամբ հայ քաղաքացիների հանդեպ իրականացված ոճրագործությունները ճանաչեն ցեղասպանության շարունակություն, իրականացնեն հետաքննություն՝ վեր հանելու այն ուժերին, որոնք կազմակերպել, իրականացրել ու արդեն 30 տարիներ շարունակական են պահում հայության դեմ ցեղասպանությունը[3], տարածքները ճանաչեն որպես ցեղասպանից ազատագրված տարածքներ, նպաստեն այդ տարածքների իրավատիրոջ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների իրավունքների վերականգնմանը, նրանց այդ տարածքներում բնակություն հաստատելուն: Ցեղասպանությանը դիմակայելու հետևանքով ծագած հակամարտության ընթացքում փախստականների կրած վնասների փոխհատուցման համար Մարդու իրավունքների եվրոպական դատարանում(ՄԻԵԴ) սկսված գործընթացը, ինչը կրկին հենվում է կեղծ ու շինծու պատմության վրա, օր առաջ պետք է կասեցնել: Հայությունը չի կարող հանդուրժել այն վնասները, որ հասցրեց Ադրբեջանը իր քաղաքացիներին՝ նրանց հանդեպ հրահրած ցեղասպանական պատերազմի ընթացքում: 1987-1994 թթ. ողջ վնասի հատուցումը ցեղասպան Ադրբեջանի պարտքն է թե՛ «ադրբեջանցի փախստականների» և թե՛ հայ փախստականների հանդեպ[4]:

Անհրաժեշտ է նպաստել և աջակցել Կասպիցի արևմուտքի ժողովուրդների հետ Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների երկխոսության կայացմանը: Այդ երկխոսությունը կվերաբերի տարածաշրջանում ապագա անվտանգ ու ներդաշնակ կյանքի, ժողովուրդների և մարդու իրավունքների վերահաստատմանը, այդ ժողովուրդների ինքնությունը հարգող և զարգացնող համակեցության կազմավորմանը[5]:

---

[1] https://www.lragir.am/2020/01/02/506266/ :
[2] https://www.lragir.am/2020/02/06/515511/ :
[3] https://www.lragir.am/2019/10/07/482555/ :
[4] https://www.lragir.am/2020/07/02/560922/ :
[5] https://www.lragir.am/2020/02/06/515511/ :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Մ. 2018, Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականները Ղարաբաղյան շարժման տարիներին և նրանց խնդիրները 30 տարի անց, «Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում» Միջազգային գիտաժողով, 2018թ. զեկույցների ժող., ՀՀ ԳԱԱ Պատմ.ինս. էջ 265-284:
2. Բաղդասարյան Յու. 2004, Բաքուն և հայերը, հակահայկական քաղաքականությունն ու հայերի էթնիկական մաքրումը Ադրբեջանում, Երևան, «Լուսակն», 288 էջ:
3. Խոջաբեկյան Վլ. 2005, Ցեղասպանությունը և հայաթափությունը Ադրբեջանում (1918-1990-ական թվականներ), Պատմաբանասիրական հանդես / ՀՀ ԳԱԱ. Հ. 1. էջ 21-41:
4. ՀՀ ԱԺ հայտարարությունը 1988-1992 թ. ընթացքում Ադրբեջանական ԽՍՀ բոլոր և ԼՂԻՄ-ի (հետագայում՝ ԼՂՀ) բազմաթիվ բնակավայրերում ադրբեջանական իշխանությունների կողմից տեղի հայ բնակչության նկատմամբ իրագործված ոճրագործությունները որպես ցեղասպանություն ճանաչման մասին: Նախագիծ, Պ-412-24.12.2008-ԱՀ-012/0:
5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 17.09.1989 թվի N 1597-XI համատեղ որոշումը՝ «Ադրբեջանական ԽՍՀ-ում, ԼՂԻՄ-ում, Հայկական ԽՍՀ սահմանային շրջաններում հայ ազգաբնակչության և խորհրդային բանակում հայազգի զինծառայողների անվտանգության ապահովման Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 01.12.1989 թվի N 1651-XI համատեղ որոշումը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշման մասին»:
6. Սուքիասյան Ս., 2017, Ալեքսանդրեթի սանջաքի հարցը թուրք-սիրիական հարաբերություններում 1936-1939 թթ., ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու,Երևան, ԵՊՀ հրատ., 57-68 էջեր:
7. Кривопусков В. 2007, Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Изд. второе, дополненное. - Москва, « Голос-Пресс», 384 с. 189.
8. Марутян А. 1995, Геноцид армян. Историческая память и трансформация этнических стереотипов (по материалам транспарантов и плакатов Карабахского движения). Центр понтийско-кавказских исследований. Краснодар.
9. Новиков А. 2015, 1905. Резня в Баку. Таганрог, «Веда», 120 с.
10. Составители: Г. Улубабян, С. Золян, А. Аршакян 1989, Сборник «Сумгаит… геноцид… гласность?» Материалы пресс-конференции, организованной 23 сентября 1989 г. Армянским историко-просветительским обществом «Гушаматян» совместно с Союзом журналистов республики в Ереване, в Доме архитекторов Армении. Общество «Знание» Армянской ССР.
11. Оганезов Г., Харатян Гр. 2014, Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. Глазами очевидцев, НАН РА, Инст. Археологии и Этнографии, 534 с.
12. Abrahamian L. 2006 , Armenian Identity in a Changing World, MAZDA PUBLISHERS, Inc. Costa Mesa u CA u, page 290&291.
13. Ադրբեջանական ԽՍՀ-ից Փախստականների համագումարի հայտարարությունը,

https://www.lragir.am/2016/05/13/132672/#sthash.FPcsqxym.dpuf, բեռնման օր՝10.07.2020:
14. Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումարի Դիմումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և արտաքին գործերի նախարարությանը, https://www.lragir.am/2019/10/07/482555/. բեռնման օրը՝ 10. 07.2020:
15. Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ցանկ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4%D5%B8%D6%82%D5%B4_%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF_(%D5%96) , բեռնման օրը՝ 10. 07.2020:
16. Ավագյան Մ. Ողջ վնասի հատուցումը ցեղասպան Ադրբեջանի պարտքն է թե՛ հայ փախստականների և թե՛ «ադրբեջանցի փախստականների» հանդեպ. նամակ վարչապետին, https://www.lragir.am/2020/07/02/560922/, բեռնման օրը՝ 10. 07.2020:
17. Ավագյան Մ. Ո՞րն է հեղափոխական իշխանության պատկերացումը վարչապետի հնչեցրած բանաձևի մասին կամ փոխզիջման փիլիսոփայությունը սպառնալիք է, https://www.lragir.am/2020/02/06/515511/ , բեռնման օրը՝ 10. 07.2020:
18. Ավագյան Մ. Վաղուց ժամանակն է, որ իշխանությունները պարզեն Բաքվի ջարդերի զոհերի թիվը, https://www.youtube.com/watch?v=1N5NV_pbhQ0, բեռնման օր՝10.07.2020:
19. Ավագյան Մ., Ըստ ՄԱԿ-ի բնորոշման՝ «ադրբեջանցիները» փախստական չեն, https://www.lragir.am/2020/07/04/561467/ , բեռնման օրը՝ 10.07.2020 :
20. Ավագյան Մ., Ավանեսով Հ., Սումգայիթի և Բաքվի ցեղասպանությունների զոհերի թվի շուրջ, https://www.lragir.am/2020/03/07/524751/ , բեռնման օր՝ 10. 07.2020:
21. Ավագյան Մ. Բաքվի մեջքին Թուրքիան էր, իսկ Բանանցի մեջքին՝ ոչ-ոք: https://www.lragir.am/2019/08/30/471137 , բեռնման օրը՝ 10.07.2020
22. Ավագյան Մ., Ժամանակն է մեջքն ուղղել և վնասազերծել հակահայ «ականները», https://www.lragir.am/2020/01/02/506266/ , բեռնման օրը՝ 10. 07.2020:
23. Բաբայան Դ. (Հարցազրույց) Արցախն իրավունք ունի բարձրացնելու Նախիջևանի հարցը, https://www.lragir.am/2018/09/17/379344/, բեռնման օրը՝ 10.07.2020:
24. Գեղամյան Վ., Հաթայ պետության դրոշմանիշը, https://varuzhan.me/2015/02/05/hatay/, բեռնման օրը՝ 10.07.2020:
25. ԼՂՀ ԱԺ, Սումգայիթի ջարդերը լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի սահմանած ցեղասպանության հանցագործության իրավական ձևակերպմանը, https://www.aysor.am/am/news/2017/02/28/%D5%8D%D5%B8%D6%82%D5%B4%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%A9-%D4%BC%D5%82%D5%80-%D4%B1%D4%BA/1220095, բեռնման օրը՝ 10. 07. 2020:
26. Հաջեան Մ. Սումկայիթ. Չդատապարտուած ցեղասպանութիւն, http://www.aztagdaily.com/archives/384408 , բեռնման օրը՝ 10. 07.2020:
27. Հայաստանի գլխի տակ փափուկ բարձ են դրել. նախիջևանագետ, https://www.youtube.com/watch?v=tlgu2yF8R34&feature=share&fbclid=IwAR0JPtHNKIONKy1MoNcDE9di-hI13D4Fy_dWXK46g-TmVWuiqrPkSIFIVVo8, բեռնման օրը՝ 10.07.2020:
28. Սումգայիթ. իսկ ի՞նչ եղավ Ապշերոնի բազմահազար հայությունը: https://www.youtube.com/watch?v=3tRyt5AXK90, բեռնման օրը՝ 10. 07.2020:

29. Սումգայիթում հայ աղջկա մսից խորոված էին բաժանում՝ ցույց տալով, թե ինչպես է պետք վարվել հայերի հետ, https://www.youtube.com/watch?time_continue=483&v=M711Us0sqOI&feature=emb_logo, Բեռնման օրը՝ 10. 07.2020:
30. Սովորական Ցեղասպանություն, Բաքու, 1990, Մաս 5, https://www.youtube.com/watch?v=4go7FG9P9oQ&t=100s, բեռնման օրը՝ 10. 07.2020:
31. Քոթանջյան S. Разоблачение Азербайджанской лжи про первых беженцев 1987 года (отрывок из фильма «Граница. Не объявленная Война» снятый в 1990 г. Синицыным А.) https://www.youtube.com/watch?v=yBe92Wa5npw&index=4&list=UU6eY6UIBBJqiS2Q0ZRig40A, բեռնման օրը՝ 10. 07.2020:
32. Փախստականների համագումարի համակարգող Խոջալուի ողբերգության ետեւում Ադրբեջանն է կանգնած, https://news.am/arm/news/438348.html, բեռնման օրը՝ 10. 07.2020:
33. Аветисян В. Цель операции «Кольцо» - Очистить Арцах от армян - Инесса Буркова, https://vstrokax.net/istoriya/tsel-operatsii-koltso-ochistit-artsah-ot-armyan/?fbclid=IwAR1dh_XyMkvTMLmhGa5mxdINjXURxQSp6Zxx1L-esa46B4cpI80jAU-zTfI բեռնման օր՝ 10.07.2020:
34. Армянский погром в Баку (часть 2) https://www.youtube.com/watch?v=kxC_7TLkrgA , բեռնման օրը՝ 10.07.2020:
35. Музей погибших воинов НКР http://www.kniga.am/?page=museum&place_id=384&search=, բեռնման օրը՝ 10.07.2020:
36. Нагорный Карабах. Историческая справка. Академия Наук Армянской ССР. Ереван, 1988 г., http://www.nkr.am/ru/karabakh-in-soviet-period , բեռնման օրը՝ 10. 07.2020:
37. Обыкновенный геноцид. Операция «Кольцо», весна-лето 1991г. Документальный фильм https://www.youtube.com/watch?v=6fV2urslvPs, բեռնման օրը՝ 10.07.2020:
38. An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union https://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/ բեռնման օրը՝ 10.07.2020:
39. Manufacturing A Massacre: The Armenian Pogroms in Baku, https://www.youtube.com/watch?v=0HLsdNMR4kY բեռնման օրը՝ 10. 07.2020:
40. Nagorno-Karabakh: Risking War , EXECUTIVE SUMMARY AND RECOMMENDATIONS, Europe Report, 14 Sep 2005, No166: https://www.crisisgroup.org/ru/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-azerbaijan/nagorno-karabakh-viewing-conflict-ground բեռնման օրը՝ 10. 07.2020:

Ամփոփում

1987–1992 թվականներին Ադրբեջանական ԽՍՀ–ում հայության հանդեպ կատարվածը 130 տարիներ ձգվող ցեղասպանության շարունակությունն է

Մարիամ Ավագյան

Այս աշխատանքը հիմնավորում է, որ 1987-1992 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում հայության հանդեպ կատարվածը հարյուր երեսուն տարիներ ձգվող ցեղասպանության շարունակությունն է ու դրա մի դրվագը, երբ 1894-1896 թթ. տեղ գտավ Մեծ աղետի նախացնցումը, 1915-ին՝ Մեծ աղետը, իսկ հետագայում եղան հետցնցումներ, որոնցից մեկը 1987-1992 թթ. էր:

Ցեղասպանության հենքի վրա կամայականորեն ստեղծված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, այնուհետև Ադրբեջանական ԽՍՀ-ը, այսօր էլ Ադրբեջանի Հանրապետությունը հայության և տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ցեղասպանությունը ամրագրեցին որպես պետական քաղաքականություն:

Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների հակահայ քաղաքականությունը 1987-ից ստացավ բացահայտ ու ագրեսիվ բնույթ, ցեղասպան բռնարարքները հայաթափեցին Ադրբեջանի հայկական օջախները: Շուրջ 800 000 հայ դարձան փախստական:

Տարածաշրջանում անվտանգության և խաղաղության հաստատման համար Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ փախստականների իրավունքների վերականգնման խնդիրը առանցքային գործոն է, և օր առաջ այն պետք է դրվի քաղաքական սեղանի վրա:

Հիմնաբառեր. *Հայ փախստական, Ադրբեջան, ցեղասպանություն, ՄԻԵԴ, ազատագրված տարածք*

Резюме

Преступления, совершенные в отношении граждан армянской национальности в Азербайджанской ССР в 1987–1992 годах, являются продолжением непрекращавшегося 130–летнего геноцида

Мариам Авакян

Работа обосновывает, что преступления, совершенные в отношении граждан армянской национальности в Азербайджанской ССР в 1987-1992 гг. являются продолжением и очередным этапом непрекращавшегося 130-летнего геноцида армян, когда в 1894-1896 годах имел место форшок перед Великой Катастрофой, в 1915 году произошла Великая Катастрофа, а затем произошли афтершоки, один из которых был в 1987-1992 годах.

На основании Геноцида произвольно созданная Азербайджанская Демократическая Республика, затем Азербайджанская ССР, а сегодня Азербайджанская Республика закрепили геноцид армян и коренных народов региона в качестве государственной политики.

Антиармянская политика властей Азербайджанской ССР с 1987 года приобрела открытую и крайне агрессивную форму, геноцид опустошил армянские поселения Азербайджана. Около 800 000 армян стали беженцами.

Вопрос восстановления прав армянских беженцев из Азербайджанской ССР является ключевым фактором в обеспечении безопасности и мира в регионе, и он должен быть включен в повестку переговоров по Карабахскому конфликту

Ключевые слова: *Армянский беженец, Азербайджан, геноцид, ЕСПЧ, освобожденные территории*

Abstract

The actions committed against the Armenians in the Azerbaijani SSR in 1987–1992 are continuation of genocide that has lasted for 130 years

Mariam Avagyan

This work proves the fact that the actions committed against the Armenians in the Azerbaijani SSR in 1987-1992 are continuation of genocide and an episode of it that lasted for one hundred and thirty years; when the foreshock of the Great Catastrophe occurred in 1894-1896, the Great Catastrophe in 1915, and later there were aftershocks, one of which was in 1987-1992.

The Democratic Republic of Azerbaijan, which was arbitrarily created on the basis of the Genocide, thereafter the Azerbaijani SSR, and currently the Republic of Azerbaijan, established the genocide of the Armenians and the indigenous peoples of the region as a state policy. Since 1987 the anti-Armenian policy of the authorities of the Azerbaijani SSR became obvious and aggressive, and the genocide devastated the Armenian settlements that were under the control of the Azerbaijani SSR. About 800,000 Armenians became refugees.

The issue of restoring the rights of Armenian refugees from the Azerbaijan SSR is a key factor in establishing security and peace in the region, and it must be included on the agenda of Karabakh conflict negotiations.

Keywords: *Armenian refugee, Azerbaijan, genocide, ECHR, liberated territories.*